600.0007.20.01.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունվարի 2021 թվականի №7Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ 14-ՐԴ ՓՈՂՈՑԻ 70/34 ՏԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 14-րդ փողոցի 70/34 տան (այսուհետ՝ առանձնատուն) սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումն առանց միացման վճարի գանձման իրականացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն ներկայացրած՝ առանձնատան բնակիչ Ռոզա Մարտիրոսյանի (այսուհետ՝ Դիմող անձ) 2020 թվականի դեկտեմբերի 2-ի դիմումը,

բ) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Շենգավիթի տարածքային բաժնի կողմից տրված 2020 թվականի նոյեմբերի 1-ի №2796 տեղեկանքը, ըստ որի՝ Դիմող անձը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, և նրա ընտանիքի անապահովության միավորը կազմում է 30,47,

գ) Դիմող անձի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության սույն թվականի հունվարի 12-ի №ԴԳ038 գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս առարկություն չունեն առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելու վերաբերյալ,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների

13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝
   1) առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումն իրականացվում է առանց միացման վճարի գանձման.
   2) չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
20 հունվարի 2021 թ.